

## ԿԼԻՄԱ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Սահմանումներ

**Կլիմա**՝ որոշակի տարածքում եղանակի բազմամյա ռեժիմ (բնութագրվում է տվյալ տարածքում մթնոլորտի օդերևութաբանական տարրերի երկարաժամկետ վիճակագրական տվյալներով): *(Հունարեն «կլիմա» բառը նշանակում է թեքություն և մատնանշում է Երկրի մակերևույթի թեքությունը Արեգակի ճառագայթների նկատմամբ):*

**Եղանակ**՝ մթնոլորտի ստորին շերտի ֆիզիկական վիճակ տվյալ ժամանակահատվածում և տարածքում: Այն կախված է ծովերի ու ցամաքի վրա մթնոլորտային ճնշումների տարբերությունից, օդի ջերմաստիճանից, խոնավությունից, ամպամածությունից, մթնոլորտային տեղումների քանակից, քամիներից:

**Կլիմայական գոտիներ**՝ համանման կլիմայական պայմաններ ունեցող տարածքներ (հիմնականում ձգվում են Երկրագնդի ընդլայնական ուղղությամբ և բնութագրվում են մթնոլորտի համանման շրջանառությամբ): Հիմնական կլիմայական գոտիներն են՝ հասարակածային, արևադարձային, բարեխառն և բևեռային կլիմայական գոտիները: Կան նաև անցումային գոտիներ՝ մերձհասարակածային, մերձարևադարձային, մերձբևեռային:

**Կլիմայի տեսակներ**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնականում առկա են կլիմայական 6 գոտիներ՝ չոր մերձարևադարձային, կիսաանապատային, տափաստանային, բարեխառն, ցուրտ լեռնային և մերձձնային:

**Կլիմայի փոփոխության պատճառներ**՝ դիտարկումների հիման վրա գրանցված ժամանակակից կլիմայի գլոբալ տաքացում և փոփոխություններ, որը պայմանավորված է մարդու հարաճուն տնտեսական գործունեությամբ, ջերմոցային գազերի պարունակության աճով և Երկրի բնական ճառագայթային հաշվեկշռի խախտմամբ (տեխնածին կլիմայի փոփոխություն):